



17.03.2021

ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ս.թ. ապրիլի 19-23-ը կազմակերպում է **«Փաստերի ստուգումը պաշտոնյաների համար»** թեմայով առցանց աշխատաժողով: Այն նախատեսված է պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, Ազգային ժողովի պատգամավորների և անձնակազմի համար: Միջոցառումն իրականացվում է «Միջազգային հանրապետական ինստիտուտ» (International Republican Institute) աջակցությամբ:

Աշխատաժողովի նպատակն է բարելավել պաշտոնյաների՝ փաստերի ստուգման գիտելիքն ու հմտությունները, նրանց իրազեկել փաստերի ստուգման՝ թվային հասանելիություն ունեցող հիմնական գործիքների մասին: Այն նաև նպատակ ունի պաշտոնյաներին աջակցել, որպեսզի վերջիններս փնտրեն, ստանան և տարածեն վստահելի և ճշգրիտ տեղեկություններ: Աշխատաժողովին որպես բանախոս հանդես կգան ոլորտի փորձագետներ **Շուշան Դոյդոյանը, Մավել Մարտիրոսյանը, Արթուր Պապյանը, Հարություն Փատրյանը և Դավիթ Սանդուխչյանը**: 5-օրյա աշխատաժողովը կանցկացվի Զուլ հարթակի միջոցով **օրական 2 ժամ տևողությամբ**: Կից ներկայացնում ենք միջոցառման օրակարգի նախագիծը:

Խնդրում ենք մինչ **2021թ. մարտի 24-ը** պատասխան գրությամբ տրամադրել **առնվազն երկու անձի տվյալներ** (անուն/ազգանուն, պաշտոն, հեռախոսահամար և էլ. հասցե), ովքեր կմասնակցեն «Փաստերի ստուգումը պաշտոնյաների համար» թեմատիկ աշխատաժողովին:

Աշխատաժողովի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանին 091407836 հեռախոսահամարի կամ sh.doydoyan@icloud.com էլեկտրոնային հասցեի միջոցով:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

Հարգանքով՝
Շուշան Դոյդոյան



Փաստերի ստուգումը պաշտոնյաների համար

Աշխատաժողով

Օրակարգ

Ապրիլի 19-23, 2021թ.

Մասնակիցներ՝ Պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորներ, ԱԺ աշխատակազմի ներկայացուցիչներ:

Օր 1-ին Ապրիլի 19, 2021թ, ժամը 16:00 - 18:00
Մամվել Մարտիրոսյան • Լրատվամիջոցներ և մեդիագրագիտություն: • Տեղեկությունների ճշգրտումը և փաստերի ստուգումը: • Մեդիայի տեքստ, համատեքստ, մանիպուլյացիա, փաթեթավորում:
Օր 2-րդ Ապրիլի 20, 2021թ. , ժամը 16:00 - 18:00
Արթուր Պապյան և Մամվել Մարտիրոսյան • Աղբյուրների ուսումնասիրություն և որոնում: • Լուսանկարների և տեսանյութերի ստուգում: • Տեղորոշում և արբանյակային լուսանկարներ: • Կայքերի խորացված զննում:
Օր 3-րդ Ապրիլի 21, 2021թ., ժամը 16:00 - 18:00
Շուշան Դոյրոյան և Հարություն Ծատրյան • Արտահայտվելու և տեղեկատվության ազատություն: • Տեղեկատվության ազատությունը որպես ապատեղեկատվության դեմ պայքարի միջոց: • Տեղեկություն տրամադրելու ընթացակարգերը. տեղեկություն տրամադրելու կարգը, ժամկետները և մեխանիզմները:

• Պրոակտիվ հրապարակայնություն ապահովելու մեխանիզմները: • Խոսքի և տեղեկատվության ազատության անհրաժեշտ սահմանափակումները, արգելված բովանդակություն (ատելության խոսք, բռնության կոչ, քարոզ և այլն):
Օր 4-րդ Ապրիլի 22, 2021թ. , ժամը 16:00 - 18:00
Հարություն Ծատրյան • Աշխատանք բաց տվյալների հետ: • Որոնողական համակարգերի միջոցով աղբյուրներն ուսումնասիրելու հնարավորությունները: • Էլեկտրոնային փոստերի և սոցիալական ցանցերում հաշիվների ստուգում:
Օր 5-րդ Ապրիլի 23, 2021թ. , ժամը 16:00 - 18:00
Դավիթ Սանդուխյան • Տեղեկատվական անվտանգության սկզբունքները: • Ցանցային, սարքավորումների և անձնական (օգտատիրոջ) հատվածի անվտանգության ապահովման միջոցներն ու մեխանիզմները: • Գաղտնագրումը կամ նյութական կրիչների պահպանության ապահովման միջոցները:

*Տեխնիկական բոլոր հարցերի դեպքում կարող էք զանգահարել **091/094 700 974** հեռախոսահամարով:*